ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահ Վահագն Վերմիշյանի՝ 2019 թվականի նոյեմբերի 8-ից 14-ը Իրանի Իսլամական Հանրապետություն (Թեհրան)՝ սեյսմաբանությանը և ինժեներական սեյսմաբանությանը (SEE-8) վերաբերող 8-րդ միջազգային համաժողովին մասնակցելու նպատակով գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝ Վահագն Վերմիշյան (Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոնի գլխավոր տնօրեն, ճարտարապետ՝ Արմեն Մինասյանի և Իրանի Շարիֆ համալսարանի կառուցագիտության ֆակուլտետի համահիմնադիր՝ դոկտոր Մարկ Գրիգորյանի ուղեկցությամբ)

2. Զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահ

3.Գործուղման վայրը և ժամկետը՝ Թեհրան (Իրանի Իսլամական Հանրապետություն, 2019 թվականի նոյեմբերի 8-ից 14-ը)

4.Հրավիրող կողմը՝ Իրանի Իսլամական Հանրապետության գիտության, հետազոտությունների, տեխնոլոգիաների նախարարության ինժեներական սեյսմաբանության և սեյսմաբանության միջազգային ինստիտուտ

5.Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

2019 թվականի նոյեմբերի 1-ից 13-ը Իրանի Իսլամական Հանրապետության Թեհրան քաղաքում կայացավ Սեյսմաբանության և ինժեներական սեյսմաբանության (SEE-8) խորագրով առաջիկա 8-րդ միջազգային համաժողովը, որի նպատակն էր միավորել երկրաշարժի մասնագետներին մի շարք ոլորտներում, ովքեր ներկայացրին և քննարկեցին իրենց վերջին հետազոտությունների արդյունքները՝ ավելի ապահով սեյսմիկ միջավայր ապահովելու համար:

6. Քննարկված թեմաները՝

Քննարկված թեմաներից առավել արդյունավետ և բովանդակալից բնույթ կրեց հետևյալ թեման՝

Սեյսմաբանություն և ինժեներական սեյսմաբանություն

7.Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցեր՝

Իրականացվեցին մի շարք այցելություններ՝

Այցելություն Թեհրանում ՀՀ դեսպանություն: Հանդիպում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Արտաշես Թումանյանի հետ:

Այցելություն Ինժեներական սեյսմաբանության և սեյսմաբանության միջազգային ինստիտուտ IIEES (International Institute of Earthquake Engineering and Seismology) նորակառույց սեյսմիկ փորձագիտական բազզա՝ ժամանակակից տեխնոլոգիաներին և սեյսմիկ փորձարկումներին տեղում ծանոթանալու նպատակով:

Այցելություն Ինժեներական սեյսմաբանության և սեյսմաբանության միջազգային ինստիտուտի գլխավոր գրասենյակ՝ սեյսմիկ կայանների տեխնոլոգիապես հագեցված մշտադիտարկման կենտրոնին ծանոթանալու համար:

Ինստիտուտի ղեկավար կազմի հետ քննարկվեցին մի շարք հարցեր ապագա համագործակցության հնարավորությունների, ինչպես նաև համագործակցության հուշագրի նախապատրաստման հետ կապված :

Տեղի ունեցան մի շարք հանդիպումներ մասնավորապես՝

Հանդիպում տեղի ունեցավ CCL Iran (Under license of CCL U.K.) ընկերության գլխավոր տնօրեն պրն. Բաբաք Առեֆփուրի հետ: Կատարվեց այցելություն Իրանի ամենամեծ կանաչ մոլի շինհրապարակ, որտեղ իրականացվում էր բարդ կոնստրուկտիվ նախագիծ և ծածկերն իրականացվում էին հետ-լարման սկզբունքով, որի կիառումը Հայաստանում խրախուսելի է թէ տեխնիկական և թէ տնտեսական առումներով: Հիշյալ ընկերությունն Իրանում ունի ավելի քան հինգ միլիոն քմ.կառուցած ծածկեր հետ-լարման եղանակով: Պայմանավորվածություն ձեռք բերվեց, նմանատիպ տեխնոլոգիաի կիրառման և մասնագետների ուսուցման հարցերն իրականացնել Հայաստանում:

Հանդիպում Behine Civil ընկերության գլխավոր տնօրեն Պրն. Հասանիի և խորհրդի անդամների հետ: Այս ընկերությունը զբաղվում է շինանյութերի արտադրությամբ, շինարարությամբ ու ներդրումներով: Քննարկման արդյունքում իրանական կողմը պատրաստակամություն հայտնեց մոտակա օրերում այցելել Հայաստան՝ շինանյութերի արտադրության ու ներդրումային ծրագրերի հետ ծանոթանալու նպատակով:

Թերանի Շահիդ Բեհեշթի համալսարանում տեղի ունեցավ Սեյսմաբանության և ինժեներական սեյսմաբանության (SEE-8) խորագրով 8-րդ միջազգային համաժողովի

բացման արարողությունը, որտեղ բացման խոսքով հանդես եկան Թեհրանի քաղաքապետ՝ պարոն Փիրուզ Հանաչին ու ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահ Վահագն Վերմիշյանը:

Ծրագրի երկրորդ մասում, մասնագիտական դասախոսություններով հանդես եկան Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոնի գլխավոր տնօրեն, ճարտարապետ Արմեն Մինասյանը և Իրանի Շարիֆ համալսարանի կառուցագիտության ֆակուլտետի համահիմնադիր՝ դոկտոր Մարկ Գրիգորյանը:

Կազմակերպված էր սեյսմակայուն շինարարության տեխնոլոգիաների ցուցահանդես, որի շրջանակներում հանդիպումներ տեղի ունեցան բոլոր տաղավարներում համապատասխան մասնագետների հետ և ձեռք բերվեց նախնական պայմանավորվածություն ոլորտում համագործակցության կապեր հաստատելու վերաբերյալ:

Թեհրանի Հոմա հյուրանոցում կայացավ հանդիպում Գերմանական iMOVE, Federal Institute for Vocational Education and Training (BIBB) ընկերության ներկայացուցիչների հետ: Հանդիպման նպատակն էր Հայաստանում շինարարության ոլորտում աշխատողների հմտությունների որակի բարձրացման նպատակով կազմակերպել զարգացման դասընթացներ:

Թեհրանի ազգային Առաջնորդարանում տեղի ունեցավ ԻԻՀ Խորհրդարանի (Մաջլեսե Շորայե Էսլամի) հյուսիսային իրանահայության պատգամավոր, սեյսմիկ ճարտարագիտության դոկտոր Կարեն Խանլարիի հետ, որտեղ քննարկվեցին երկու երկրների մասնագիտական փորձի փոխանակման հարցեր:

Կատարվեց այցելություն Թեհրանում Ժիրոլ ընկերության կողմից կառուցած կոյուղու մաքրման կայաններ, որտեղ ընկերության սեփականատեր Վալոդիա Մելիք Խաչատրյանը մանրամասն բացատրեց մեխանիզմները: Միաժամանակ քննարկվեցին նաև Հայաստանում ներդրման հնարավորությունները:

Տեղի ունեցավ հանդիպում Իրանի հայ ճարտարապետների և ճարտարագետների միության վարչության անդամների հետ, որտեղ նախնական պայմանավորվածություն ձեռք բերվեց 2020 թվականին Երևանում կազմակերպել իրանահայ ճարտարապետների գործունեության սեմինար-ցուցահանդես:

Տեղի ունեցավ նաև հանդիպում «Փարթանա» ընկերության նախագահ՝ պրն. Ֆարամարզ Մոֆտախարի և խորհրդի մյուս անդամների հետ: Քննարկվեցին հարցեր կապված ՀՀ մարզերում բազմաբնակարան շենքերի կառուցման ծրագրի հետ:

Ստորագրվեց համագործակցության հուշագիր Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոնի և ինժեներական սեյսմաբանության և սեյսմաբանության միջազգային ինստիտուտի միջև:

10. Գործուղվող - Վահագն Վերմիշյան

11. Ստորագրությունը, ամսաթիվը – ***18.11.2019 թվական***